Հաստատում եմ

Հայաստանի շախմատի ակադեմիայի

տնօրեն Ս.Լպուտյան

25 հոկտեմբերի 2016թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի շախմատի ակադեմիայի ընդունելության

Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի շախմատի ակադեմիա ընդունվող երեխաների ընդունելության կարգը, պարտականությունները, ինչպես նաև ընդունելությանը վերաբերող այլ հիմնական հարցեր:

Հայաստանի շախմատի ակադեմիայում շախմատի խմբակային դասընթացներն անցկացվում են շաբաթական 6 օր՝ երկուշաբթիից շաբաթ, յուրաքանչյուր խմբի համար շաբաթական 3 օր. **ԱՆՎՃԱՐ** հիմունքներով:

Ակադեմիա կարող են ընդունվել.

- 5 տարեկան սկսնակ երեխաներ, ում կուսուցանեն շախմատ՝ սկսած առաջին քայլերից:
- 6 տարեկան երեխաներ, ովքեր գիտեն քայլերը:
- 7 տարեկան երեխաներ, ովքեր կընդունվեն գիտելիքների ստուգման կարգով (ընդունող հանձնաժողովի կողմից), կամ նրանք, ովքեր ունեն IV կարգի I բալ:
- 8 տարեկան երեխաներ, ովքեր ունեն շախմատային III կարգ:
- 9 տարեկան երեխաներ, ովքեր ունեն շախմատային II կարգ:
- 10 տարեկան երեխաներ, ովքեր ունեն շախմատային I կարգ (ընդունող հանձնաժողովի որոշմամբ):
- 11-16 տարեկան պատանի շախմատիստ/շախմատիստուհիներ, ովքեր անցել են Հայաստանի պատանիների առաջնության տվյալ տարիքային խմբի եզրափակիչ փուլ:
- 17-18 տարեկան պատանի շախմատիստ/շախմատիստուհիներ, ովքեր տեղեր են զբաղեցրել Հայաստանի պատանիների առաջնության տվյալ տարիքային խմբի եզրափակիչ փուլի մրցաշարային աղյուսակի առաջին կեսում:

Ակադեմիա ընդունվելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- երեխայի ծննդյան վկայականի պատճեն,
- 1 լուսանկար (3x4 չափսի),
- շախմատային կարգը հաստատող գրքույկ (կարգ ունենալու դեպքում):

Հերթագրումը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Նոր խմբի ձևավորման դեպքում հերթագրված երեխաները տեղեկացվում են հեռախոսազանգի միջոցով (ըստ հերթագրման հերթականության):

Խմբի փոփոխման կամ այլ շախմատային մարզադպրոցներից ակադեմիա տեղափոխվելու պարագայում անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ: Տեղափոխման (ընդունելության) վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ դիմում-հայտում ներկայացված տվյալների հիման վրա:
Այլ շախմատային մարզադպրոցներից ակադեմիա տեղափոխությունը կատարվում է տարեկան 2 անգամ.

- մայիս ամսին՝ Հայաստանի պատանիների առաջնության եզրափակիչ մրցաշարից հետո,
- նոյեմբեր ամսին՝ Աշխարհի և Եվրոպայի պատանիների առաջնություններից հետո: